ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 մարտի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

29
(2879)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Ա. ՍԻՄՈՆՅԱՆԻ ՔԱՎՈՐԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՕԳՆՈՒՄ Է, ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԽԱՆԳԱՐՈՒՄ

Ծաղկաձորի «Պալլադա»-ն խնդիրներ ունի Ալեն Սիմոնյանի որդու կնքահոր՝ Էդգար Ավագյանի հետ: «Պալլադա Ծաղկաձոր» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը լուրջ շինարարական խնդիրների առաջ է կանգնած: «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ են հասել, որ դեռ նախորդ տարի՝ շինության հիմքը փորելիս, պարզվել է, որ շենքի նախատեսած հիմքում՝ մակերեսից 20 եւ ավելի մետր խորության վրա, գետ է հայտնաբերվել, որն էլ խաթարել է շինարարության ընթացքը: Բացի այդ՝ կան նաեւ սողանքներ: Հիշեցնենք, որ խոսքը մեծամասշտաբ շինարարության մասին է, որի գովազդը ամենուր պտտվում է, բայց, փաստորեն, շենքի կառուցումը լուրջ ռիսկերի առջեւ է: Ըստ «Հետք»-ի՝ ընկերության հիմնադիր բաժնետերերը չորսն են՝ Ռոբերտ Գալուստյանը, Կարեն Դավթյանը, Լեւան Չիկովանին եւ Էդգար Ավագյանը (բոլորը՝ 25-ական % բաժնեմասով): Մեկ տարի անց Կարեն Դավթյանն իր բաժնեմասը փոխանցել է իրեն փոխկապակցված անձին՝ Գեղամ Կիրակոսյանին: Հատկանշական է, որ «Պալլադա Ծաղկաձոր» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցապատման մեջ 25 տոկոս բաժնեմաս ունի ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի որդու կնքահայրը՝ Էդգար Ավագյանը: Այն նույն անձը, որին 2016 թ.-ին սնանկ ճանաչելու պահանջով դատարան է դիմել «Արարատբանկը», քանի որ բանկում 2012 թ.-ից Ավագյանը 28 հազար դոլարի վարկ է ունեցել, որը 2015-ից հետո պատշաճ չի մարել: Սնանկացած քավորը երբեք շինարարական բիզնեսով չի զբաղվել, վերջին տվյալներով էլ՝ այսօր աշխատում է Ալեն Սիմոնյանի կնոջ ղեկավարած «Ֆրինյուզ» ՀԸ-ում: Այս արտոնյալ շինարարների խումբը Ծաղկաձորում, չունենալով շինթույլտվություն, արդեն իսկ սկսել է շինաշխատանքներ. հետո Ծաղկաձորի քաղաքապետ Նարեկ Հարությունյանը տվել է նրանց շինթույլտվություն, որից հետո նոր՝ 2023 թվականի հունիսի 26-ին, Ծաղկաձոր համայնքում հանրային լսումներ են հրավիրվել՝ շինթույլտվություն ստանալու համար: Այսինքն՝ օրենքի կոպիտ խախտում է ձանձանագրվել. պետք է գործընթացը հակառակ կողմից սկսվեր: ArmLur.am-ը տեղեկացավ, որ «Պալլադա Ծաղկաձոր» բնակելի թաղամասը, ստորգետնյա գետերի հետ կապված խնդրից բացի, եւս մեկ խնդիր ունի. ըստ հետազոտությունների՝ Ծաղկաձոր քաղաքի հողային շերտը ամբողջությամբ սողանքներ են, տեղի բնակչությունն ասում է՝ «մեր հողը լողացող է»: Հենց սրա պատճառով հողի բարձր շերտի փլման վտանգ կա: Այս սողանքներն են նաեւ պատճառը, որ ճաքճքել եւ թեքվել է Ծաղկաձոր մտնող ճանապարհը: ArmLur.am-ը համալիրի տարածքում նկատեց, որ հենց այս պատճառով գրեթե 3 տարի ձգվող շինարարությունը հանրությանը զգալի արդյունքներ ցույց չի տալիս:

ArmLur.am-ը տեղում պարզեց, որ դեռ նախորդ տարվա ամռանը կայացած հանրային լսումներից հետո համալիրի շինարարությունում զգալի առաջընթաց չի գրանցվել: Մենք կապվեցինք «Նյու Սիթի Պրոջեկտս» կառուցապատող ընկերության հետ, որի նախագծերից մեկը հենց «Պալլադա Ծաղկաձոր-ն» է: Ընկերությունից մեզ պատասխանեցին, որ տեղյակ են ստորգետնյա ջրերի մասին, ասելով. «Բոլորը գիտեն, որ Ծաղկաձորում ստորգետնյա ջրեր կան, այդ պատճառով մենք աշխատում ենք համապատասխան դրենաժներով: Մեր աշխատանքներին հիմա ոչինչ չի խանգարում, այն բնականոն ընթանում է»: Սողանքների վերաբերյալ նշեցին, որ ունեն համապատասխան երկրաբանական հետազոտության արդյունքները, եւ այդ տարածքում սողանքներ չկան: Բայց, փաստն այն է, որ շինարարությունն այս ընթացքում էական արդյունք չի գրանցել: Հավելենք նաեւ, որ այս համալիրը գնահատվել է 40-50 միլիոն դոլար: Նկատենք, որ արտոնյալ շինարարներին իշխանությունն օգնում է. շինթույլտվությունը տալիս են շինաշխատանքները սկսելուց հետո, բայց բնությունը խանգարում է, քանի որ սողանքներն ու ստորգետնյա ջրերը արգելում կամ դժվարացնում են շինաշխատանքները, որոնք, ըստ նախագծի, ավարտվելու են 2027 թվականին. համենայնդեպս բնակարանները շահագործման են հանձնվելու 2027 թվականի սկզբին:

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավորների եւ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի փակ հանդիպումից: Մասնավորապես՝ հանդիպման բուն թեման եղել է ԲԴԽ-ի կողմից հրապարակված սկանդալային տեսանյութը: Խոսքը՝ «Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի եւ այլ գործերի տապալման մեղավորները. բացահայտում դատական իշխանությունից» վերնագրով տեսանյութի մասին է, որտեղ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմը՝ դատական դեպարտամենտը, մեղադրում է առանձին դատավորների եւ փաստաբանների՝ նախկին նախագահների եւ բարձրաստիճան այլ պաշտոնյաների դատավարությունների ձգձգման համար: Տեսանյութում ակնհայտորեն թիրախավորելով դատավորներին ու փաստաբաններին՝ ԲԴԽ-ն փորձում է արդարանալ՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող դատական մի շարք գործերի բացահայտման ձախողման համար: «Հայաստան» խմբակցությունը բացատրություն է ուզել Կարեն Անդրեասյանից, իսկ վերջինս էլ դատական դեպարտամենտի պաշտոնական պարզաբանում է տվել, թե՝ ճնշվող դատավորի վրա ավելի շատ կարող են ազդել տարբեր քաղաքական շրջանակները կամ դրանց կողմից պարբերաբար իրականացվող լրատվական արշավները, քան բաց տվյալների օբյեկտիվ եւ լիովին օրինական մատուցումը: Անկախ որոշ հարձակումներից՝ դատական դեպարտամենտը չի պարտակելու ոչ մի կարեւոր տեղեկատվություն եւ նորացված մեթոդներով իրականացնելու է անհրաժեշտ հանրային իրազեկումները: Ի պատասխան Անդրեասյանի այս պարզաբանումներին՝ «Հայաստան» խմբակցության պատգամավորները նրան հարձակվողական հարցեր են տվել եւ պատասխաններ են ստացել, որ, միգուցե հանրությանը փորձեց խաբել, բայց իրենց չի խաբի, ու դա հատուկ կազմակերպված տեսանյութ է եղել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Էջմիածնի «Քիմիկների» զորամասի անհետ կորած զինծառայողների գործով հակակոռուպցիոն դատարան հարցաքննության է հրավիրվելու նաեւ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի նախկին պետ Օնիկ Գասպարյանը: Նա նախաքննության ընթացքում այս քրեական գործով հարցաքննվել եւ ցուցմունք է տվել, ուստի դատարանը հարցաքննության է հրավիրելու նաեւ նրան: Էջմիածնի «Քիմիկների» զորամասի անհետ կորած զինծառայողների գործով հակակոռուպցիոն դատարանում տեւական ժամանակ է հարցաքննվում են անհետ կորած կամ զոհված զինծառայողների ծնողները. իսկ այդ գործով մեղադրյալներ են ԳՇ պետի նախկին տեղակալ Անդրանիկ Մակարյանը, եւ զորամասի այլ պաշտոնյաներ: Անդրանիկ Մակարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ ՔՕ 376 հոդվածի 3-րդ մասով: Նշենք, որ ՀՀ ՔՕ 376 հոդվածի 3-րդ մասը սահմանում է անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ. սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, եթե դրանք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով: Անդրանիկ Մակարյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը՝ երկրից չհեռանալու մասին:

Հայաստանում անհայտ ծագման ծխախոտի անօրինական վաճառքը նոր թափ է ստանում: Էլի անանուն, առանց ակցիզի ծխախոտներ են վաճառվում արդեն օնլայն տիրույթում: «Ժողովուրդ» օրաթերթը դեռ նախորդ տարի էր գրել, որ հատկապես գյուղական վայրերում լայն տարածում է ստացել անհայտ ծագման ծխախոտների վաճառքը: Մեկ տարի անց էլ, սակայն, իրավիճակը, փաստորեն, չի շտկվել: Այսպիսով՝ «Ժողովուրդ» օրաթերթը նկատել է, որ վաճառքի ամենատարածված կայքերից մեկում՝ List.am-ում, անհայտ ծագման ծխախոտի վաճառքը շարունակվում է: List.am-ում տարածված լուսանկարից երեւում է, որ անհայտ ծագման ծխախոտը, որը, ի դեպ, տեղական արտադրման է, վաճառվում է մեկ բլոկը 2800 դրամով: Ներկայացված լուսանկարներում երեւում է նաեւ, որ ծխախոտի տուփի վրա չկա որեւէ մակնշում: Այսինքն՝ գնորդը չգիտի, թե ինչ է գնում, ինչ որակի, ում կողմից է արտադրված եւ այլն. միայն պարզ է, որ էժան է, ու ծխախոտի տուփ, եւ ոչ ավելին:

ԶՐՈՒՅՑ

«ԻՆՉՔԱՆ ՁԵԶԱՆԻՑ ՀԵՌՈՒ, ԱՅՆՔԱՆ ԱՍՏԾՈՒՆ ՄՈՏԻԿ»

Գյումրի նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանը եւ որդին՝ Սպարտակ Ղուկասյանը, Հակակոռուպցիոն դատարանում են եւ դատարանին դիմեցին իրենց դեմ հարուցված քրեական գործը չտեսանկարահանել, ինչն էլ դատարանը բավարարեց:

ArmLur.am-ը Վարդան Ղուկասյանին մի քանի հարցեր ուղղեց:

-Պարոն Ղուկասյան, Դուք միշտ հավատավոր մարդ եք եղել, աղոթել եք, Աստծուն հավատացել եք, բայց, կարծես թե, միշտ կրիմինալ պատմությունների մեջ եք: Ո՞նց եք Ձեր մեջ համատեղում Աստծուն եւ կրիմինալը:

-Հիմա ասեմ. ուրեմն, կրիմինալ պատմությունների մեջ ընդհանրապես չեմ եղել, ուրեմն, այդ ձեր կառույցները, որ հիմա Ձեզ էլ ուղարկել են, ովքեր որ սարքել են այս ամեն ինչը, մշտական մեզ դիտավորյալ կապում են կրիմինալի հետ, որպեսզի իրենց հանցագործությունները թաքցնեն: Սա է:

-Պարոն Ղուկասյան, մեզ որեւէ մեկը չի ուղարկել, մենք եկել ենք հատուկ Ձեր քրեական գործի ճշմարտացիությունը իմանալու եւ հասկանալու՝ արդյոք...

-Դե լավ եղե՛ք, լավ եղե՛ք...

-Հետաքրքի՞ր է առանց Ազգային ժողովի:

-Ես Ազգային ժողովում չեմ ծնվել, ի՞նչ է պատահել...Շատ լավ է, հանգիստ ապրում ենք մեզ համար: Ավելի հեռու. ինչքան ձեզանից հեռու, այնքան Աստծուն մոտիկ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀՈԴՎԱԾ՝ ԲԱՆՏԻՑ

«ՆԻԿՈԼԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ԶԱՌԱՆՑԱՆՔՆԵՐԸ»

ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը «Նուբարաշեն» ՔԿՀ-ից հերթական հոդվածն է հրապարակել, որը վերնագրել է՝ «Կոռումպացված դատարաններ, անդպահիժ դաշտոնյաներ, ընտրովի արդարադատություն. Հայաստանը՝ FREEDOM HOUSE-ի զեկույցում»:

«Միջազգային իրավապաշտպան «FREEDOM HOUSE» կազմակերպության տարեկան զեկույցն աշխարհում ազատությունների մասին հայկական տիրույթում հիմնականում քննարկվեց իր արցախյան գնահատականներով, որոնք հստակ արձանագրում էին Ադրբեջանի հակահայկական, հակաժողովրդավարական պահվածքը: Եթե մենք ունենայինք գոնե մի քիչ ազգային եւ խելամիտ իշխանություններ, ապա արեւմտյան աշխարհում հեղինակություն վայելող այս կազմակերպության գնահատականները կարող էին ուժեղացնել հայկական դիվանագիտության զինանոցը...

Այս հոդվածով ցանկանում եմ անդրադառնալ Հայաստանում ազատությունների եւ ժողովրդավարության մասին տարեկան գնահատականներին՝ ըստ FH-ի, որոնք թեպետ վկայում են մեր երկրում խայտառակ վիճակի մասին, մնացել են հանրային ուշադրությունից դուրս:

Եվ այսպես, ըստ հերթական զեկույցի՝ Հայաստանը կրկին դասվել է «մասնակի ազատ» երկրների խմբին՝ հօդս ցնդեցնելով նիկոլական ռեժիմի զառանցանքները «ժողովրդավարության բաստիոնի», փարոսի, անգամ լապտերների մասին:

Սակայն էլ ավելի աղաղակող, Փաշինյանի ստերը մերկացնող, երկրում հաստատվող ավտորիտարիզմի մասին փաստեր եւ գնահատականներ են բացահայտվում տվյալ զեկույցն ամբողջապես ուսումնասիրելու ընթացքում:

Այդ տվյալները լիարժեք ընկալելու համար պետք է հիշել, որ FH-ի զեկույցը գնահատում է ամեն երկրում քաղաքական իրավունքների եւ քաղաքացիական ազատությունների մակարդակը՝ ըստ հստակ ցուցանիշների՝ 0-ից մինչեւ 4 բալ:

Եվ այսպես, առաջին իսկ հարցադրումներով մերկացվում է Նիկոլի իշխանության հիմնական միֆերից մեկը՝ ազատ եւ արդար ընտրություններով ձեւավորելու հարցը: Ըստ միջազգային փորձագետների՝ «որքանո՞վ են Հայաստանի գործադիր եւ օրենսդիր իշխանությունները ձեւավորվել հենց այդպիսի ընտրություններով» հարցերին Հայաստանը երկու պարագայում էլ ստացել է 4 առավելագույն բալից երկու բալ: Այսինքն՝ կարող ենք փաստել, որ անգամ FH-ի զեկույցով Փաշինյանի ռեժիմը կիսալեգիտիմ է:

Մեկ այլ հարցով՝ «արդյո՞ք ընտրված ղեկավարը եւ ԱԺ-ն են որոշում կառավարության քաղաքականությունը», Հայաստանը նորից ընդամենը 2 բալ ունի հնարավոր 4-ից՝ փաստելով, որ մեր երկրի կառավարումն ամբողջությամբ չի իրականացվում կառավարող մարմինների կողմից:

Հաջորդ հարցադրումներով ստացված գնահատականներն ապտակ են ռեժիմի հակակոռուպցիոն պայքարին: FH-ը փաստում է, որ Հայաստանում պաշտոնեական կոռուպցիայի դեմ պատնեշները հազվադեպ են քննվում, թեպետ առկա են հստակ ապացույցներ նրանց չարաշահումների մասին: Բաց եւ թափանցիկ գործելու ցուցանիշով Նիկոլի կառավարությունը նորից մի ճմրթած գնահատական է ստանում՝ 2-ը 4-ից, եւ նշվում են բազմաթիվ ահազանգեր լրագրողների եւ լրատվամիջոցների կողմից ինֆորմացիա ստանալու եւ տարածելու հարցում:

Սակայն, այս ամենը դեռ ծաղիկներն են: Ամենախայտառակ վիճակն արձանագրվում է Հայաստանի դատական իշխանությանը վերաբերող ցուցանիշներով: «Կա՞ անկախ դատական համակարգ» հարցով մեր երկիրը ստացել է ընդամենը 1 բալ 4 հնարավորից: Նույն վիճակը «քրեական եւ քաղաքացիական գործերով օրինական գործընթացի ապահովում» ցուցանիշով է՝ 1 բալ 4-ից: Միջազգային զեկույցի հեղինակներն արձանագրել են, որ «դատարաններն առնչվում են համակարգային քաղաքական ազդեցությանը, եւ դատական ատյաններն ախտահարված են կոռուպցիայով: Դատարանները ենթարկվում են ճնշումների դատախազների կողմից՝ հօգուտ մեղադրական դատավճիռների»,- նշված է հոդվածում:

ՊԱՇՏՊԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Քաղաքացին դիմել է Մարդու իրավունքների պաշտպանին եւ հայտնել, որ դեռեւս չի ստացել վարժական հավաքի մասնակցության համար տրվող վարձատրությունը, մինչդեռ իր հետ մասնակցած մյուս քաղաքացիներն արդեն իսկ ստացել են համապատասխան գումարները: ՄԻՊ-ից հայտնում են, որ դիմումատուն խնդրել է Պաշտպանի աջակցությունը՝ դրամական հատուցումը ստանալու հարցում: Բարձրացված հարցի առնչությամբ, Պաշտպանի հանձնարարությամբ, անմիջապես սկսվել է քննարկման ընթացակարգ, որի շրջանակներում Պաշտպանության նախարարությանն առաջարկվել է հնարավորին սեղմ ժամկետներում միջոցներ ձեռնարկել խնդրի կարգավորման ուղղությամբ:

Արդյունքում վարժական հավաքի մասնակցության օրերի համար հասանելիք դրամական բավարարումն ամբողջությամբ փոխանցվել է քաղաքացու բանկային հաշվին, որից հետո դիմումատուն հաստատել է, որ գումարն արդեն ստացել է: Պաշտպանը կարեւորում է Պաշտպանության նախարարության հետ ձեւավորված արդյունավետ համագործակցությունը, որի շրջանակում դրական լուծում է ստացել քաղաքացու բարձրաձրած հերթական խնդիրը:

ԸՆԴՈՒՆԵԼ Է ԴԵՍՊԱՆԻՆ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն ընդունել է Հայաստանում Բուլղարիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Կալին Անաստասովին: Այդ մասին հայտնում են նախագահի աշխատակազմից: Ողջունելով դեսպանին՝ նախագահը շնորհավորել է նրան Բուլղարիայի Հանրապետության ազգային տոնի՝ Ազատագրման օրվա կապակցությամբ եւ հաջողություններ ու բարգավաճում մաղթել Բուլղարիայի ժողովրդին: Հանրապետության նախագահը բարձր է գնահատել Հայաստանի եւ Բուլղարիայի միջեւ քաղաքական երկխոսության առկա մակարդակը՝ հիմնված երկու ժողովուրդների բարեկամության եւ մշակութային սերտ կապերի վրա: Շնորհակալություն հայտնելով ընդունելության եւ բարեմաղթանքների համար՝ դեսպան Կալին Անաստասովը նշել է, որ իր ջանքերն է ներդնում երկու երկրների միջեւ համագործակցության շարունակական ամրապնդմանն ու ընդլայնմանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների միջեւ բազմաշերտ փոխգործակցության առաջմղման նպատակով քայլերի ակտիվացման շուրջ հարցեր: Անդրադարձ է կատարվել տնտեսության, կրթության եւ գիտության, առողջապահության, բարձր տեխնոլոգիաների եւ այլ ոլորտներում համատեղ ծրագրերի իրականացման, լավագույն փորձի փոխանակման եւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում համագործակցության խթանման հեռանկարներին: Զրույցի ընթացքում կարեւորվել են երկու երկրների միջեւ նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունների եւ համաձայնագրերի կյանքի կոչմանն ուղղված քայլերը: Հանդիպմանը մտքեր են փոխանակվել տարածաշրջանային եւ միջազգային ընդհանուր իրադրության եւ զարգացումների վերաբերյալ: Երկուստեք շեշտվել է առկա հիմնախնդիրներն ու մարտահրավերները խաղաղ բանակցային ուղիով հաղթահարելու եւ հարեւանների հետ հարաբերությունները բարիդրացիության սկզբունքների շուրջ ձեւավորելու կարեւորությունը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Հայաստանի եւ Հունաստանի պաշտպանության նախարարները քննարկել են պաշտպանության ոլորտում հարաբերությունների ամրապնդմանն առնչվող հարցեր պաշտպանական ոլորտում երկկողմ համաձայնագրի շրջանակում:

Ինչպես տեղեկացնում է «Արմենպրես»-ը, մամուլի համար հայտարարության ժամանակ այս մասին ասաց Հունաստանի ազգային պաշտպանության նախարար Նիկոս Դենդիասը:

«Այսօր մենք ականատես ենք շատ անկայուն իրավիճակի, քանի որ գործ ունենք էքսպանսիոնիստական ուժերի հետ, որոնք անտեսում են միջազգային իրավունքը, միջազգային պայմանագրերը, արժեքները, ՄԱԿ-ի սկզբունքները: Միջազգային հանրության ընդհանուր խնդիրը պետք է լինի այդ մարտահրավերներին դիմակայելը: Մենք պետք է ցույց տանք, որ պատրաստ ենք կանխել հակամարտությունների էսկալացիան եւ փորձել վերադառնալ խաղաղ իրավիճակին: Միշտ պետք է գործել միջազգային իրավունքին համապատասխան»,- ընդգծեց Դենդիասը:

Նա նշեց, որ Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի հետ քննարկել են երկկողմ հարաբերությունների զարգացման գործնական քայլերը:

«Այս տարի մենք ստորագրել են ռազմական համագործակցության ծրագիրը, որին կմասնակցեն երկու երկրների զինված ուժերը: Նախկինում եւս կարեւոր արդյունքներ ենք ունեցել. Հունաստանի ռազմական դպրոցներում սովորելու համար Հայաստանից բազմաթիվ առաջարկներ են եղել: Եվ մենք նախատեսում ենք հյուրընկալել շատ ուրիշների եկող տարիների ընթացքում»,- ասաց նախարարը:

Միեւնույն ժամանակ, նախարարը հայտնեց, որ երկու երկրները կարող են հաջող համագործակցություն հաստատել պաշտպանության ոլորտում նորարարական լուծումներ փնտրելու հարցում:

«Ուրախ էի ձեզ տեղեկացնելու Հունաստանի նոր օրենսդրության մասին, որը վերաբերում է հետազոտությունների եւ նորարարությունների նոր կենտրոնին: Մենք ուրախ կլինենք, եթե Հայաստանի ընկերությունները իրենց ներդրումը ունենան այդ համակարգում»,-եզրափակեց Հունաստանի պաշտպանության նախարարը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Իրանի արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Նասեր Քանանին վերահաստատել է իրանական կողմի այն դիրքորոշումը, որ իրենց համար անընդունելի է ցանկացած աշխարհաքաղաքական փոփոխություն, որը կհանգեցնի տարածաշրջանի միջազգային սահմանների փոփոխության:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին հայտնում է ISNA գործակալությունը՝ մեջբերելով խոսնակի պատասխանը մամուլի ասուլիսի ընթացքում հնչած հարցին՝ այսպես կոչված «Զանգեզուրի միջանցք»-ի վերաբերյալ:

«Իրանի դիրքորոշումն այս հարցի վերաբերյալ բազմիցս հայտարարվել է: Այդ դիրքորոշման մեջ փոփոխություն չի եղել եւ չի լինի»,- նշել է Քանանին:

ՔԱՆԴԵԼՈՒ ՀՐԱՄԱՆ

ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՆԱԽՕՐՈՔ ՉԵՆ ՏԵՂԵԿԱՑՐԵԼ

ArmLur.am-ը գրել էր, որ Երևանի քաղաքապետարանի հրամանով քանդվելու են Գայի պողոտայի սկզբնամասում՝ Թաքուլ Կրպեյանի անվան այգու և «Վալենսիա» համալիրի միջև ընկած ինքնակամ կառուցված բնակելի 8 միավոր տները:

Նշենք, որ քաղաքապետարանի հաղորդմամբ՝ քանդման մասին նախօրոք տեղեկացվել էր բնակիչներին, սակայն բնակիչների պնդմամբ՝ ոչինչ էլ նախօրոք չեն իմացել:

ArmLur.am-ը կապ հաստատեց Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» կուսակցության անդամ Իզաբելլա Աբգարյանի հետ, ով եղել է դեպքի վայրում, պարզելու համար՝ հարցին ինչ լուծում է տրվել:

«Իմ տեղեկություններով այսօր հանդիպում է ունեցել քաղաքապետի տեղակալը, որոշ ներկայացուցիչներ հանդիպել են նաեւ բնակիչների հետ. դեռ ընթացքում է, բայց այն ինչ հասցրեցին այդ օրը քանդել՝ քանդել են իհարկե»,- մեզ հետ զրույցում ասաց Աբգարյանը:

Աբգարյանի խոսքով՝նա նաեւ տեղյակ է, որ այդտեղ եղել են ընտանիքներ, որոնք բնակվում էին եւ հիմա դարձել են անօթեւան, սակայն նրանց առաջարկվել են ժամանակավոր կացարաններ:

«Մի ընտանիքի առաջարկվել էր ապրանքները տեղադրել մանկապարտեզում: Այդ մարդիկ, բնականաբանար, դժգոհ են, որովհետեւ դա հարցի լուծում չէ իրենց համար: Քաղաքապետարանը մտադրություն է հայտնել, որ ամբողջը քանդելու է: Այստեղ հարցը այն է, որ տեղի է ունեցել ոչ իրավաչափ վարչարարություն, այսինքն՝ մարդկանց չի տրվել խելամիտ ժամանակ, որպեսզի նրանք կարողանան ազատել տարածքը կամ գտնեն իրենց բնակության համար այլ վայր: Այս գործողությունները առաջին օրը բարբարոսաբար իրականացվեցին. իրականացվեցին անապահով մարդկանց նկատմամբ, որոնք չէին կարող իրենց ապաստան գտնել, եւ միեւնույն ժամանակ մյուսները, բնականաբար տեսնելով դա, արդեն ժամանակ ունեին դիմելու դատարան. իսկ դա քաղաքացու իրավունքն է»,- ասաց Աբգարյանը:

Աբգարյանը նաեւ նշեց, որ տարածքները, որոնք քանդվեցին, մաքսիմալ չափով կանաչ տարածքներ են եղել, որոնք տեղի բնակիչները իրենց ձեռքով են ստեղծել՝ քարերից ու օձերից մաքրելով:

«Իսկ որտեղ մեծ շինություններ են, այդտեղ նրանք չմտան այդ օրը: Սա, իհարկե, սարսափելի անարդար, ոչ իրավաչափ մոտեցում է քաղաքապետարանի կողմից»,- ասաց Աբգարյանը՝ եզրափակելով զրույցը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ԿՈՂՄՆՈՐՈՇՎԻ

«Հայաստանն այժմ կանգնած է ընտրության առջեւ՝ Արեւմո՞ւտք, թե՞ Ռուսաստան. Երեւանը պետք է կողմնորոշվի՝ իր անվտանգային խնդիրները որ դեպքում ինչ կերպ կլուծվեն»,- այս մասին «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում նշել է ԱԺ իշխող ՔՊ խմբակցության պատգամավոր Գագիկ Մելիքոնյանը:

Ըստ նրա՝ Հայաստանն ինչ-որ պահի այդ ընտրությունը պետք է կատարի:

«Լավրովն ասում է՝Հայաստանը պետք է կողմնորոշվի, Արեւմուտքն ասում է՝ Հայաստանը պետք է կողմնորոշվի: Հիմա գնացիր դեպի Արեւմուտք, Ռուսաստանի նման թշնամի ես ունենալու, գնացիր դեպի Ռուսաստան, դա նշանակում է՝ Հայաստանի կորուստ՝ իր տարածքներով, Հայաստանի անկախությունը վերացնում եք, որովհետեւ վերջը մենք գիտենք՝ այնտեղ ինչ է. երբ մեզ առաջարկում են մտնել ռուս-բելառուս կազմ՝ դաշինք, դա արդեն Հայաստանի վերջն է», - ասաց «Քաղաքացիական պայմանագրի» անդամը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն անցած շաբաթ չբացառեց՝ Հայաստանը կարող է նաեւ դե յուրե սառեցնել անդամակցությունը ՀԱՊԿ-ին: Կազմակերպության վերաբերյալ Երեւանից հնչող գնահատականներին շաբաթավերջին արձագանքեց նաեւ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը: Անթալիայի դիվանագիտական ֆորումին հաջորդած մամուլի ասուլիսում Սերգեյ Լավրովն ընդգծեց՝հետեւում են Հայաստանի ղեկավարության հայտարարություններին եւ հետեւություններ կանեն սեփական գործնական քայլերը պլանավորելիս: Լավրովի խոսքով՝ժամանակն է, որ Հայաստանը կողմնորոշվի ՀԱՊԿ-ում իր կարգավիճակի շուրջ:

Հայ-ֆրանսիական ռազմատեխնիկական համագործակցության ամրապնդման ֆոնին Երեւանը խոսում է ոչ միայն ՀԱՊԿ-ին անդամակցությունը դե յուրե սառեցնելու մասին, այլեւ կասկածի տակ է դնում երեք տասնամյակից ավելի Հայաստանի սահմաններին տեղակայված ռուս սահմանապահների գործունեության արդյունավետությունը: Նրանք, բացի հայ-ռուսական պայմանագրով սահմանված գործառույթներից, 44-օրյա պատերազմից հետո Նիկոլ Փաշինյանի համաձայնությամբ տեղակայված են նաեւ հայ-ադրբեջանական սահմանի տարբեր հատվածներում, ընդ որում՝ առանց հստակ իրավական հիմքերի եւ մանդատի:

ՔՐԵԱԿԱՆ

ՀԱՓՇՏԱԿՎԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ՝ ՊՆ-ՈՒՄ

Մուշեղ Մելոյանը, ՀՀ պաշտպանության նախարարի՝ 2022 թվականի օգոստոսի 24-ի հրամանով, նշանակվել է ՀՀ ՊՆ Ն զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի հրամանատարի պաշտոնին: ՀՀ զինված ուժերի «Ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազորությունների սահմաններում, ի թիվս այլնի, ունենալով իրեն ենթակա ծառայողներ, պատասխանատու լինելով գումարտակի ռազմական տեխնիկայի եւ նյութական մյուս միջոցների վիճակի եւ անվթարության համար, ունենալով գումարտակի տնտեսությունը ղեկավարելու, վերջինիս ստորաբաժանումներում եղած սպառազինությունը, ռազմական տեխնիկան եւ ռազմամթերքը գիտենալու, դրանց ճիշտ շահագործումը կազմակերպելու եւ առնվազն երեք ամիսը մեկ անգամ դրանց առկայությունը, վիճակն ու հաշվառումն անձամբ ստուգելու պարտականություններ, այդպիսով հանդիսանալով պաշտոնատար անձ, օգտագործելով իր իշխանական եւ ծառայողական լիազորությունները՝ փաստացի իրեն վստահված գույքի՝ իր ղեկավարած գումարտակի տրանսպորտային միջոցների համար հատկացված դիզելային վառելիքի հափշտակություն կատարելու միասնական դիտավորությամբ 2022 թվականի հոկտեմբերից մինչեւ 2023 թվականի հունվար ամիսն ընկած ժամանակահատվածում գումարտակին հատկացված ավտո-մեքենաներից, հիմնականում՝ «Կամազ 43114» մակնիշի, ՊՆ 63-78 Շ, «Ուրալ 4320-10» մակնիշի, ՊՆ 25-03 Տ զինհամարանիշների ավտոմեքենաներից մաս-մաս հափշտակել է խոշոր չափերով՝ 506.558.168 ՀՀ դրամ արժողությամբ ընդհանուր 1.200 լիտր դիզելային վառելիք, որը տեղափոխել է զորամասի հրամանատարական դիտակետի հետնամաս, պահեստավորել թվով 6 տարաների մեջ: Այնուհետեւ Մուշեղ Մելոյանը հափշտակված դիզելային վառելիքը 2023 թվականի հունվար եւ փետրվար ամիսներին իր «Պիկապ» տեսակի ծառայողական օգտագործման ավտոմեքենայով մաս-մաս՝ յուրաքանչյուր անգամ 600-ական լիտր ծավալով, տեղափոխել է ՀՀ ՊՆ Ն զորամասի թիկունքի ղեկավարման կետ եւ հանձնելով իր անմիջական ծառայողական ենթակայության տակ գտնվող՝ ՀՀ ՊՆ Ն զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի նյութատեխնիկական ապահովման դասակի հրամանատար Կամո Սարգսյանին՝ հանձնարարել է վաճառել այն ու ստացված գումարը հանձնել իրեն:

Կամո Սարգսյանը, կատարելով Մուշեղ Մելոյանի հանձնարարությունը, 2023 թվականի հունվարին 600 լիտր դիզելային վառելիքը վաճառել է չպարզված անձանց եւ ստացված 240.000 ՀՀ դրամ գումարն ամբողջությամբ տվել է Մուշեղ Մելոյանին, իսկ 2023 թվականի փետրվարին Մուշեղ Մելոյանի կողմից նրան փոխանցված վառելիքի գումարը վճարելու համար «Ֆինքա» ՈՒՎԿ ՓԲ ընկերությունից 2023 թվականի փետրվարի 16-ին ստացել է 301.000 ՀՀ դրամ վարկ, որից 240.000 ՀՀ դրամը տվել է Մուշեղ Մելոյանին, իսկ վառելիքն օգտագործել է սեփական կարիքների համար:

Այսինքն՝ Մուշեղ Մելոյանին վերագրվում է հանցանքի կատարում՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով:

Բացի այդ, պաշտոնատար անձ Մուշեղ Մելոյանը, անտեսելով փաստացի իրեն վստահված՝ ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասի 2-րդ հրաձգային գումարտակին հատկացված եւ թիկունքի ղեկավարման կետում պահվող գումարտակի նյութական միջոցները պահեստարան տեղափոխելու վերաբերյալ զորամասի հրամանատարի թիկունքի ապահովման գծով տեղակալից ստացած հանձնարարությունը, օգտագործելով իր իշխանական եւ ծառայողական լիազորությունները, դրանցով պայմանավորված ազդեցությունը, փաստացի իրեն վստահված խոշոր չափերով գույքի հափշտակություն կատարելու ուղղակի դիտավորությամբ 2023 թվականի ապրիլին հանձնարարել է իր անմիջական ծառայողական ենթակայության տակ գտնվող՝ ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի նյութատեխնիկական ապահովման դասակի հրամանատար Կամո Սարգսյանին նյութական միջոցները գաղտնի տեղափոխել եւ պահել առանձնացված վայրում:

Կամո Սարգսյանը, գիտակցելով Մուշեղ Մելոյանի կողմից վստահված գույքը հափշտակելու հանգամանքը, պատրաստակամություն է հայտնել կատարելու վերջինիս հանձնարարությունը եւ նախապես խոստացել է պարտակել հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները՝ հափշտակված նյութական միջոցները:

Այնուհետեւ Կամո Սարգսյանը Մուշեղ Մելոյանի կողմից վստահված գույքը հափշտակելուն օժանդակելու դիտավորությամբ ժամանակավոր անհատույց օգտագործման համար ձեռք է բերել Գեղարքունիքի մարզի Սոթք բնակավայրի 6-րդ փողոցի 19-րդ տանը կից ավտոտնակը, որից հետո զորամասից հափշտակված նյութական միջոցները, այն է՝ խոշոր չափերով՝ ընդհանուր 3.430.200 ՀՀ դրամ արժողությամբ ձմեռային բաճկոնները, ձմեռային տաբատները, զինվորական համազգեստները, զրահաբաճկոններն ու դրանց ներդիրները, քնապարկերը, պառկելաթախտը, ճտքավոր կոշիկները, կաճյակները, զինվորական գոտիները, շապիկները, անթեւ բաճկոնները, անձրեւանոցները, քողարկիչները, քողարկման ցանցերը, ձմեռային դիմակները, ականջակալները, ենթաօձիքները, պաշտպանական միջոցները, կապի միջոցները, դրանց մարտկոցները, լիցքավորման սարքերը, ակնոցները, ուսապարկերը, փամփշտատուփի պայուսակները, հակագազերը, ձմեռային ձեռնոցներն ու ձմեռային գլխարկները, ձեռքի եւ ոտքի պաշտպանիչները, ոտքի ձնապաշտպանիչները, զինվորական սաղավարտերը, ձմեռային կոշիկի տակդիրները, ձեռնոցները, անկողնային ու հիգենայի պարագաները տեղափոխել ու պահել է նշված ավտոտնակում: Այդկերպ Կամո Սարգսյանը, նաեւ միջոցները՝ հափշտակված առարկաները պահելու համար նախատեսված պահեստարան տրամադրելով, օժանդակել է Մուշեղ Մելոյանի կողմից խոշոր չափերով վստահված գույքը հափշտակելուն: Դրանից հետո՝ մինչեւ 2023 թվականի օգոստոսի 24-ն ընկած ժամանակահատվածը, հափշտակված նյութական միջոցները չեն հանձնվել զորամասի զինծառայողներին եւ տնօրինվել են Մուշեղ Մելոյանի հայեցողությամբ, իսկ նշված օրը հայտնաբերվել եւ առգրավվել են հիշյալ պահեստարանում կատարված խուզարկությամբ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՀԱՑԱԾՆԵՐԸ՝ ՄԱՅՐ ՈՒ ԴՈՒՍՏՐ

Մարտի 3-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Շիրակի մարզում: Ժամը 22:10-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության 9-11 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի շենքերից մեկի բնակիչները առավոտվանից չեն պատասխանում դռան թակոցներին ու հեռախոսազանգերին:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, նշված հասցե են ժամանել Գյումրու հրշեջ-փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ:

Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակի 1-ին վաշտի 2-րդ դասակի պարեկները՝ գումարտակի հրամանատար Կարեն Կուրեղյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Վանիկ Սաղոյանի, գումարտակի ծառայության ավագ տեսուչ Աղասի Խաչատրյանի եւ դասակի հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար Արման Ջատիկյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանզատել են նույն վաշտի պարեկներ Սարգիս Կիրակոսյանն ու Արմեն Հարությունյանը:

Ժամանել է նաեւ ոստիկանության Կումայրիի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետի տեղակալ Մկրտչյանի գլխավորությամբ:

Փրկարարները ոստիկանների ու պարեկների ներկայությամբ բացել են 58 Բ շենքի նշված բնակարանի դուռը, որը ներսից բանալիով փակված է եղել, եւ բանալին փականի վրա է գտնվել, դուռը բացելուց հետո հյուրասենյակի հատակին բերանքսիվայր հայտնաբերել են 2 դի:

Ահազանգով ժամանել է նաեւ Հայաստանի քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության խումբը՝ վարչության պետի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Դեպքի փաստով «սպանություն» հատկանիշներով Շիրակի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ մահացածները նշված տան բնակիչներ 84-ամյա Ալբինա Ղ.-ն է եւ 59-ամյա Նաիրա Հ.-ն:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ դիերի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել:

Բնակարանի միջանցքում առկա է եղել գազի վառարան՝ գազը վառած վիճակում:

Քննիչի որոշմամբ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ մահացածները մայր ու դուստր են:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 1-ից մարտի 4-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 205 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՅՍ ՏԱՐԻ ԿՆՈՐՈԳՎԻ՞

Ավելի քան չորս տարի է, ինչ Իջեւան-Բերդ ավտոճանապարհի Վազաշեն-Պառավաքար շրջանցիկ, համեմատաբար ապահով ճանապարհին կառուցված, ճանապարհի դիմացի բարձունքներում տեղակայված ադրբեջանական հենակետերի գնդակոծություններից պաշտպանող մեծ երկարությամբ պաշտպանիչ պատի մի մասը քանդված է: Անցած տարիներին պետական բյուջեից սահմանագոտում ավտոմեքենաների երթեւեկի անվտանգությունն ապահովող պատի քանդված հատվածի վերանորոգման համար գումար չի հատկացվել: Եթե սահմանագոտու այդ հատվածում իրավիճակը լարվի, ադրբեջանական զինուժը հրաձգային կամ հրետանային կրակ բացի, Բերդ-Իջեւան ավտոճանապարհի վերոհիշյալ հատվածով անցնող ավտոմեքենաները եւ դրանցում գտնվողներն ազերի զինյալների համար դառնալու են անպաշտպան թիրախներ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ հարցնելով, թե սահմանագոտում երթեւեկության անվտանգությունն ապահովող պատի քանդված հատվածի վերականգնումը երբ է կատարվելու: Մարզպետարանի պատասխանում նշված է. «Գաբիոնե պատի վերականգնումը նախատեսված է ՀՀ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության « Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի պատվիրատվությամբ 2024 թվականին իրականացվելիք՝ Հ 37/Մ-4/ - Այգեհովիտ - Վազաշեն- Պառավաքար Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 17+300 հատվածի հիմնանորոգման աշխատանքների շրջանակներում»:

ՈՌՈԳԵԼԻ ՀՈՂԵՐԸ՝ 6427 ՀԱ

Տավուշի մարզպետարանի տեղեկություններով՝ մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողային հաշվեկշռի, կազմում են 110 665,6 հեկտար, որից վարելահող՝ 25 485,3 հեկտար, բազմամյա տնկարկներ՝ 1981,8 հեկտար, այդ թվում՝ խաղողի այգիներ՝ 1195,3 հեկտար, պտղատու այգիներ՝ 786,5 հեկտար, խոտհարքներ՝ 9400,6 հեկտար, արոտավայրեր՝ 63 006 հեկտար,այլ՝ 10791,8 հեկտար: Տավուշ մարզի ոռոգելի հողատարածքները 2023 թվականին ավելացել են շուրջ 140 հեկտարով, իսկ 2024 թվականին ոռոգելի հողատարածքները կավելանան 200 հեկտարով: Մարզի ընդհանուր ոռոգելի հողատարածքները, ըստ հողային հաշվետվության, կազմում են 6427 հա, որից տնամերձերը՝ 1216 հա: 2017թվականին գոյություն ուներ պետական բյուջեի միջոցներով Կողբի եւ Հախումի ջրամբարների շինարարության ծրագիր, նախատեսվում էր սահմանամերձ տարածքներում կառուցվելիք այդ ջրամբարներում կուտակել ընդհանուր առմամբ 2 միլիոն խորանարդ մետր ջուր: Այդ ջրամբարները չկառուցվեցին, 2018թ.-ի իշխանափոխությունից հետո Տավուշում ոչ մի ջրամբար չի չկառուցվել: Տավուշի տարածքով հոսող գետերը՝ Աղստեւը, Ոսկեպարը, Հախումը, Քարահանը եւ այլն, հոսում են Ադրբեջան, այնտեղ կուտակվում ջրամբարներում, ոռոգում այդ երկրի հողատարածքները, այգիները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

«ՆՎԻՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ. ՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՏՈՒՆԴԱՐՁԸ»

Մատենադարանի թանգարանի ընծայաբերման սրահում տեղի ունեցավ «Նվիրական անուններ. մատյանների տունդարձ» խորագրով ցուցադրության բացման արարողությունը, որի ընթացքում ներկայացվեցին տարբեր տարիների Մատենադարանի խոշոր նվիրատուների ընծայաբերած ձեռագրերի, արխիվային նյութերի եւ հնատիպ գրքերի բացառիկ հավաքածուներ:

Հանդիսավոր ելույթում Մատենադարանի տնօրեն Արա Խզմալյանը նշեց, որ միջոցառումն ուներ առանձնահատուկ խորհուրդ: 65 տարի առաջ՝ նույն օրը, Մատենադարանը ստացավ գիտահետազոտական ինստիտուտի կարգավիճակ, ինչի շնորհիվ պետականորեն ու մասնագիտորեն ամրագրվեցին Մատենադարանի գործունեության հիմնական ուղղությունները, որոնք անփոփոխ են մինչ օրս:

«Դրանք են ձեռագրական ժառանգության կոնսերվացումն ու վերականգնումը, մանրաժապավենների ստեղծումը, ձեռագրերի գիտական նկարագրությունն ու ցուցակագրումը, հրատարակչական, թարգմանական ու լայն իմաստով նաեւ հանրահռչակման աշխատանքները: Այստեղ գործադրվեցին հայագիտության դասական սկզբունքները, այնուհետեւ նորոգվեցին՝ ըստ ժամանակի գիտական հրամայականի»,-նշեց Խզմալյանը:

Նրա դիտարկմամբ՝հայ մարդու հավաքչականությունը բոլոր ժամանակներում եղել է առաքելություն, եւ Մատենադարանը հենց այդ բնազդի խորհրդանիշն է, քանի որ ձեռագրերի հետեւում մարդկային ճակատագրեր են ու բարոյական սխրանքի պատմություններ: Խզմալյանը երախտիքի խոսք ուղղեց բոլոր ազգանվեր անձանց, ովքեր տարբեր տարիներին իրենց անգնահատելի նվիրաբերություններով հարստացրել են Մատենադարանի հավաքածուն, համալրել նրա մեծարժեք պահոցը:

«Ձեռագրերը ներծծված են ոչ միայն աստվածաշունչ խոսքով ու աղոթքով, այլեւ մարդկային ապրումներով ու կենսագրությամբ, որ մատյաններին հաղորդում են թրթիռն ու էներգետիկ լիցքը, ինչին ծանոթ են ձեռագրերի հետ գործ ունեցող մարդիկ, վերականգնող մասնագետները: Մատենադարանի ձեռագիր հավաքածուն արտացոլումն է մեր հավաքական պատմության, որի հետքերն առկա են ֆիզիկական որոշակիությամբ: Մատենադարան մուտք գործած ամեն մի ձեռագիր հերթական վավերացումն է մեր նախնիների սխրանքի, երաշխիքը հավաքական հիշողության: Ձեռագրերի նվիրաբերումը տարիների հետ վերաճել է հայության գոյահաստատման յուրահատուկ ակտի, դարձել հայրենիքի եւ սփյուռքի միասնականության հենք ու գրավական»,- ասաց տնօրենը:

Խզմալյանը տեղեկացրեց, որ բարերաները հետայսու կազմելու են Մատենադարանի տեղեկատվական քաղաքականության առանցքը եւ առաջիկայում շատ են լինելու անդրադարձները նվիրական անուններին: Մատենադարանն այս տարի նախատեսում է հատուկ ցուցադրություն, որտեղ կներկայացվեն վերջին մեկ տարվա արժեքավոր ձեռագրական համալրումները: Տնօրենի պնդմամբ՝ Մատենադարան մուտք գործած յուրաքանչյուր ձեռագիր հայտնվում է պրոֆեսիոնալ խնամքի եւ հոգածության հավիտենական դաշտում:

Միջոցառման ընթացքում տեղի ունեցավ բարերար Վահե Բաղալյանի կողմից Մատենադարանին մեծարժեք ձեռագրի ընծայաբերման հանդիսավոր արարողությունը: Առաջին անգամ նվիրատուի համար սահմանվել էր «Մատենադարանի բարերար» ոսկե մեդալը, եւ քանի որ Վահե Բաղալյանը գտնվում էր գործուղման մեջ, ուստի Հովհաննես Երեցի ընդօրինակած ավետարանը, որը գրվել է 1454 թվականին Բաղեշի Մզուք գյուղում, Մատենադարանին ընծայեց բարերարի որդին՝ հայտնելով, որ Բաղալյանների ընտանիքն այդ արժեքավոր ավետարանը ձեռք էր բերել մասնավոր աճուրդում: Նա հավելեց, որ Բաղալյանների համար մեծ պատիվ է Մատենադարանի հավաքածուի համալրման գործում ներդրում ունենալը, իսկ ոսկե մեդալն ու հատուկ պատվոգիրը խիստ պարտավորեցնող են:

ՀԱՄԱՅՆՔ

ԹԱՓՈՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Երեւանի թափոնների տեսակավորման ծրագիրն ընդլայնվում է: Առաջիկայում մայրաքաղաքի շուրջ 300 հասցեում կտեղադրվի 930 նոր թափոնաման: «Արմենոյրես»-ի մամուլի սրահում հրավիրված ասուլիսում Երեւանի քաղաքապետարանի «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը տեղեկացրեց, որ նոր թափոնամանները հնարավորություն կտան տեսակավորել թուղթը, ստվարաթուղթը, ապակին, պլաստմասե իրերը: Այս ամենին գումարվելու է նաեւ ալյումինի հավաքագրման թափոնամանը:

«Արդեն նոր թափոնամանները Երեւանում են եւ մարտի կեսերից կսկսվեն տեղադրման աշխատանքները: Ստացել ենք նաեւ բազմաֆունկցիոնալ ավտոմեքենա, որով իրականացվելու է ապակյա շշերի թափոնների տեղափոխումը: Փորձը ցույց էր տալիս, որ ապակյա շշերի գողության դեպքեր են լինում: Հիմա այս նոր թափոնամանի պարագայում դա կբացառվի, որովհետեւ շիշը նետելու պարագայում դա հնարավոր չի լինի դուրս հանել»,- ասաց Արմեն Բեգոյանը:

Պատասխանատուները վստահեցնում են, որ նոր թափոնամանների քանակը բավարար կլինի մայրաքաղաքում աղբի տեսակավորման համար:

«Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի թափոնների տեսակավորման վարչության պետ Արմեն Շեխոյանը նշեց, որ փորձը ցույց է տալիս, որ բնակիչները դրական են արձագանքում: Նաեւ նրանց ջանքերի շնորհիվ տարեկան նկատելի քանակով թափոն չի հայտնվել աղբավայրերում եւ ուղարկվել է վերամշակման:

«Դինամիկան զգացվում է: Մեկ ցուցանիշ նշեմ՝ 2020 թվականին տարեկան 300 տոննա թուղթ է հավաքվել, հիմա մենք կրկնակի ցուցանիշ ենք արձանագրել: Կարող ենք ասել, որ տարեկան 600 տոննա ստվարաթուղթ, 30 տոննա պլաստիկ չի հայտնվել աղբավայրում»,-ասաց Արմեն Շեխոյանը: Նա կարեւորեց իրազեկման աշխատանքներն ու կրթական ծրագրերը: Արդեն դպրոցներում իրականացվում է թափոնամանների սպասարկում: Տեղադրվել են ստվարաթղթի, թղթի, պլաստիկի համար նախատեսված թափոնամաններ:

«Այս ամենը նպաստում է դպրոցներում թափոնների տեսակավորման վարքագծի ձեւավորմանը: Իհարկե, այդ վարքագիծը կատարելագործելու տեղ կա, որովհետեւ հաճախ շփոթում են, ու տեսակավորումը ոչ միշտ է ճիշտ արվում, սակայն պետք է հաշվի առնել, որ նախնական փուլում են, եւ դեռ այդ վարքագիծը կկատարելագործվի»,-ասաց Արմեն Շեխոյանը:

Երեւանում թափոնների տեսակավորման ծրագրի ընդլայնմամբ ակնկալվում է, որ հավաքագրված ծավալներն ավելանալու են: Դա ենթադրում է, որ թափոնների վերամշակման հնարավորություններն ընդլայնելու անհրաժեշտություն կա: Այս առնչությամբ Արմեն Բեգոյանը հավելեց, որ շշերի, թղթի, ապակու մասով վերամշակման հարցում խնդիրներ չեն տեսնում: Խնդիրներ կան պլաստիկի վերամշակման ծավալների հետ կապված, որոնք ավելացնելու անհրաժեշտություն կա:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 37 պատահար. 53 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի հրաձգության ֆեդերացիայի հետ համատեղ հայտ է ներկայացրել հրաձգության Եվրոպայի 2026 թվականի մեծահասակների եւ երիտասարդների առաջնությունը Երեւանում հյուրընկալելու համար:

«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտնում են ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից, մանրամասնելով, որ Հայաստանի հայտը ներկայացրել են Հայաստանի հրաձգության ֆեդերացիայի նախագահ Արթուր Հովհաննիսյանը եւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը Հունգարիայի Դյոր քաղաքում անցկացված հրաձգության Եվրոպայի առաջնության շրջանակում՝ մարզաձեւի միջազգային ֆեդերացիայի գործկոմի արտահերթ նիստում:

ԿԳՄՍ նախարարի տեղակալի խոսքով՝ բացի Հայաստանից, 2026 թվականի Եվրոպայի առաջնությունը հյուրընկալելու հայտ է ներկայացրել նաեւ Բուլղարիան: Երեւանի եւ Վառնայի նախնական հայտերի ներկայացումից հետո Հրաձգության միջազգային ֆեդերացիան որոշում է կայացրել երեք հոգանոց աշխատանքային հանձնաժողով ձեւավորել, որը կայցելի մրցավայրեր՝ պայմաններին եւ ենթակառուցվածքներին ծանոթանալու նպատակով:

ԵԱ-ի անցկացման վերաբերյալ վերջնական որոշումը կկայացվի 2024 թվականի մայիսին:

ԶԱՎԹԱԾԸ՝ ԵՐԵՎԱՆՑԻՆԵՐԻՆ

Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը մարտի 4-ին հանդիպել է Լվովյան փողոցի բնակիչների հետ, լսել նրանց հարցերն ու դիտարկումները: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ քաղաքապետի տեղակալն այս հանդիպման հետ կապված մանրամասներ է հայտնել «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում կատարած գրառման միջոցով:

«Համայնքի գործողությունները միտված չեն հոգսեր պատճառելու քաղաքի բնակիչներին, մեր խնդիրն է համայնքապատկան տարածքները վերադարձնել Երեւանին՝ ավելացնելով կանաչ գոտիներ:

Նշված փողոցում վաղը նախատեսված ապամոնտաժման աշխատանքները կդադարեցվեն:

Մենք ընդլայնված կազմով եւս մի քանի քննարկում կունենանք՝ հետագա գործողությունների հետ կապված»,- գրել է Փամբուխչյանը:

Օրեր առաջ Արմեն Փամբուխչյանը հայտնել էր, որ քաղաքապետի համապատասխան որոշումներով Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան փողոցում անօրինական տիրապետումից ազատվում են համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը եւ դրանցում առկա անօրինական շինությունները: Քաղաքապետի տեղակալի խոսքով՝ քաղաքային իշխանությունները վարում են համայնքային զավթած տարածքները երեւանցիներին վերադարձնելու քաղաքականություն:

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԱՆԳԼԵՐԵՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը երեկ մասնակցել է Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի նախաձեռնած «Դասավանդում հանուն հաջողության» խորագրով երկօրյա համաժողովի բացմանը՝ նախատեսված անգլերեն դասավանդող ուսուցիչների համար:

ԿԳՄՍՆ-ից հայտնում են, որ միջոցառմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, Հայաստանում Միացյալ Թագավորության փոխդեսպան Փոլ Մորիսը, Բրիտանական խորհրդի անգլերեն գլոբալ ծրագրերի ղեկավար Մայքլ Քոնոլին:

Համաժողովին մասնակցության հայտ են ներկայացրել Երեւանի եւ ՀՀ մարզերի՝ անգլերեն դասավանդող ավելի քան 800 ուսուցիչներ. հայտատուների շուրջ 50%-ը ՀՀ մարզերից է:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է համաժողովի մասնակիցներին եւ շնորհակալություն հայտնել ամենօրյա պատասխանատու աշխատանքի համար: Նա ընդգծել է, որ պետության համար ամենաառանցքային հարցերից է ուսուցիչների հանդեպ վարվող քաղաքականությունը՝ ապահովելու նրանց անհրաժեշտ պայմաններով, արժանապատիվ վարձատրությամբ եւ աջակցող գործիքներով արդյունավետ վերապատրաստումների միջոցով:

«Տարիներ շարունակ պետությունը որոշակի ֆինանսավորում է հատկացրել վերապատրաստումների համար՝ փորձելով խրախուսել ուսուցիչների մասնագիտական զարգացումը: Այսօր ավելի քան հասունացել է այդ համակարգը փոխելու հրամայականը. չեն կարող բոլոր ուսուցիչներն անցնել նույն վերապատրաստման համակարգով, քանի որ դա արդյունավետ չէ ո՛չ ուսուցիչների, ո՛չ պետության համար,- ասել է նախարարը եւ նշել, որ դրական արդյունքը պահանջում է միասնական ջանքեր:- Առաջին հերթին դուք պետք է մեզ հուշեք, թե որ ուղղություններով աջակցության կարիք ունեք, եւ մենք՝ որպես պետություն, պետք է մշակենք մեխանիզմներ եւ գործիքներ՝ ուսուցչին տրամադրելու իր կարիքին համապատասխան աջակցություն»:

Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ ընթացիկ տարում կներդրվի մասնագիտական զարգացման նոր համակարգ, որի առաջամարտիկները անգլերեն դասավանդող ուսուցիչներն են լինելու:

«Շատ ոգեւորող է ձեզ այստեղ տեսնելը, ինչը ցույց է տալիս ձեր վերաբերմունքն ու սրտացավությունն աշխատանքի նկատմամբ: Այս համաժողովին ձեր ներկայությամբ դուք հնարավորություն ունեք ծանոթանալու միմյանց փորձառությանը, լսելու հաջող նախաձեռնությունների մասին եւ միասին քննարկելու, թե ինչպես դրանք կարող եք կիրառել ձեր հետագա աշխատանքում: Կրթությունն ու իրենց աշխատանքը կարեւորող այսքան մանկավարժների ներկայությունը վստահություն է ներշնչում, որ ճիշտ ուղղությամբ ենք գնում եւ չհաջողելու հնարավորություն պարզապես չունենք»,- ասել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նա շնորհակալություն է հայտնել Բրիտանական խորհրդի գործընկերներին, որոնց հետեւողական աջակցությամբ ու համագործակցությամբ մշակվել է մասնագիտական աջակցության նոր հայեցակարգ: Այն, ըստ Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Ադդէ Հովասափյանի, հնարավորինս հարմարեցված է կրթական ոլորտի նոր պահանջներին ու կարիքներին, լայն հնարավորություն է տալիս համակարգված իրականացնել մասնագիտական զարգացման աշխատանքներ ոչ միայն անգլերեն, այլեւ մյուս առարկաներ դասավանդող ուսուցիչներին:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն անդրադարձել է հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին՝ հատկապես շեշտադրելով ուսուցիչների մասնագիտական զարգացման մեխանիզմները, անդրադառնալով հերթական եւ կամավոր ատեստավորմանը, տարակարգի շնորհմանը:

«Շատ կարեւոր է այնպես փոխկապակցել հերթական եւ կամավոր ատեստավորման, տարակարգի շնորհման գործընթացները, որպեսզի դրանք միմյանց փոխլրացնեն: Անդրադառնալով տարակարգի շնորհմանը՝ պետք է ընդգծել, որ այն նախեւառաջ ուսուցչի մանակավարժական հմտությունների մասին է, ինչը միայն փաստաթղթերով հնարավոր չէ որոշել: Դրանք պետք է այնքան ինֆորմատիվ լինեն, որ գնահատող հանձնաժողովը կարողանա հասկանալ՝ ուսուցիչը գիտի արդյոք դասը ճիշտ պլանավորել, կոնկրետ իրավիճակում ճիշտ կողմնորոշվել, թե ոչ: Հերթական ատեստավորման համակարգում առանձնացվել է մասնագիտական զարգացման 4 մակարդակ. յուրաքանչյուր ուսուցիչ ինքն է գնահատելու իր կարիքը՝ ինքնագնահատման թերթիկը լրացնելով: Գնահատում իրականացնելու է նաեւ տնօրենը, եւ ստանալու ենք այն պատկերը, թե որ մակարդակում եւ ինչ մոդուլով է վերապատրաստվելու ուսուցիչը»,- ասել է ԿԳՄՍ փոխնախարարը: Արաքսիա Սվաջյանի տեղեկացմամբ՝ հերթական վերապատրաստման 5-ամյա ժամկետը հանվել է. սկսնակ ուսուցիչները մեկ տարվա ընթացքում պարտադիր պետք է վերապատրաստվեն: Երկրորդ մակարդակի համար սահմանվել է 3 տարի, երրորդ եւ չորրորդ մակարդակների համար՝ 5 տարի:

«Այս գործընթացը, որում շեշտվում են մեթոդական կարողությունները, ուղղակիորեն կապվելու է կամավոր ատեստավորման հետ, որն էլ ստուգում է ուսուցչի մասնագիտական գիտելիքը: Ուսուցիչը որպես կարիք կարող է նշել առարկայական գիտելիքի վերապատրաստումը, որից հետո կմասնակցի կամավոր ատեստավորմանը»,- ասել է Արաքսիա Սվաջյանը եւ հավելել, որ աշխատանքներ են տարվում՝ կրճատելու տարակարգի շնորհման անհրաժեշտ փաթեթը: Արաքսիա Սվաջյանն ընդգծել է, որ հերթական եւ կամավոր ատեստավորումների, տարակարգի շնորհման գործընթացներն ուղիղ փոխկապակցված են վարձատրության մեխանիզմի հետ, որն արդեն իսկ գործակվում է:

Երկօրյա համաժողովի ընթացքում պանելային հանդիպումներով քննարկվելու են մի շարք թեմաներ՝ անգլերենի զարգացման հեռանկարները, դասարաններում միջմշակութային հաղորդակցության զարգացումը, բառամթերքի հարստացմանն ուղղված մեթոդները, SMART նախագծերի ներառումը դասընթացում, լսումների արդյունավետության բարձրացում, ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացման համաշխարհային եւ տեղական փորձի ուսումնասիրում եւ այլն:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՍԱԼՈՆ 2024»

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ՝ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի նկարիչների միության «Գարնանային սալոն 2024» ցուցահանդեսում ներկայացված են վաստակաշատ եւ երիտասարդ նկարիչների վառ եւ գունեղ կտավներ, խորհրդավոր քանդակներ եւ արվեստի այլ հետաքրքիր նմուշներ, որոնք ստիպում են ժպտալ, զարմանալ, հիանալ եւ խորհել աշխարհի շուրջ:

«Արմենպրեսի» փոխանցմամբ՝ ավանդական դարձած ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ գարնան առաջին օրը՝ մարտի 1-ին:

Նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանի խոսքով՝ ցուցադրությունում ներառվել են միայն միության անդամների ստեղծագործությունները: «Ընդգրկված է 150-ից ավելի աշխատանք: Ամեն հեղինակ մի գործ է ցուցադրում: Ներկայացված են գեղանկարներ, քանդակներ, գրաֆիկական գործեր, դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ»,- հայտնեց Սաֆարյանը:

Ստեղծագործությունները չունեն հատուկ թեմատիկա. յուրաքանչյուր նկարիչ ներկայացրել է այն գործը, որը ցանկացել է: Արվեստի բազմաժանր գործերը տեղ են գտել միության Արա Սարգսյանի եւ Մարտիրոս Սարյանի անվան ցուցասրահներում: Շրջելով՝ փաստում ենք, որ քիչ չեն նաեւ կին ստեղծագործողների աշխատանքները: Սուրեն Սաֆարյանը կատակով նշում է՝ գուցե դա պայմանավորված է գարնանամուտով:

Երիտասարդ նկարչուհի Մանե Մակյանը, ավարտելով Գեղարվեստի պետական ակադեմիան, որպես լավագույն դիպլոմային աշխատանքի հեղինակ, դարձել է միության անդամ: Նա ցուցադրել է «Վերականգնման արվեստանոց» ստեղծագործությունը, որն իր աշխատանքի մի մասն է միայն: «Աշխատանքն ասես պահարանի մեջ լինի, քանի որ ինձ դուր է գալիս նոր կոնստրուկցիաներ մտածելը»,- նշում է նկարչուհին, որին ոգեշնչում են մարդկանց հետ զրույցները, հետաքրքիր թեմաները: Միայն նկարում է այն, ինչն իրեն հուզում է՝ լավ եղանակը, լավ տրամադրությունը: Միամիտ արտասանված բառերը Մակյանի համար կարող են բանալի դառնալ, որի շուրջ նա ստեղծագործելու է:

Գեղանկարիչ Դավիթ Դավթյանի համար նշանակություն չունի՝ իր կտավները կցուցադրվեն «Գարնանային սալոն»-ում, թե այլ ցուցահանդեսում: Նկարիչը կարեւորում է բարձրակարգ ցուցահանդեսների կազմակերպումը, որտեղ հնարավոր է տեսնել գործընկերների աշխատանքները, որոշ դիտարկումներ անել, համեմատել, ցուցահանդեսներ, որոնք կարող են արժեհամակարգ ձեւավորել կամ փոխել:

Նա ներկայացրել է «Արեւոտ օր» կտավը, որում հիասքանչ կանայք են: «Ցանկացա ցուցադրել մի գործ, որը համահունչ կլինի այս օրվան: Կտավում դինամիկա կա. արեւոտ օր է, բայց կանանց մեջ ներքին տագնապ կա: Այդ երկուսի համադրությունն եմ ստեղծել: Փորձել եմ կանանց գեղեցկությունն ու լույսի համադրությունն այդ դինամիկայի միջոցով ներկայացնել»,- շեշտում է Դավթյանը:

Ըստ նկարչի՝ կանայք բոլորին են ոգեւորում, եւ առանց կանանց ապրելն անիմաստ է դառնում: «Ամեն բանից կարող ես ոգեւորվել, բայց բնության ամենագեղեցիկ էակը կինն է: Հիշեք Վելասկեսին, Ռուբենսին, Ռենուարին: Նրանք գեր կանանց են պատկերել, բայց ինչ գեղեցկություն է. ոչ մի ժուռնալային բան չկա, ոչ մի ավելորդ բան չկա: Կինը համար առաջին ոգեւորողն է»,- եզրափակում է Դավիթ Դավթյանը:

Հարութ Հովհարի «Արարում» կտավի հերոսներն իրական մարդիկ են, հեղինակի ընկերներն են: «Երազ» շարքից հետո «Արարում» շարքի վրա է աշխատում, որում իր գլխավոր հերոսների գերնպատակը միայն ու միայն սիրուն ու գեղեցկությանն առնչվելն է ամեն օր ու ամեն ժամ:

«Արարում» կտավը, որն ընդգրկված է ցուցահանդեսում, նախորդ տարի մասնակցել է միջազգային մրցույթի եւ, հայտնվելով եզրափակիչում, ներկայացվել է Ֆլորենցիայում:

ՀԱՄԵՐԳ

ՌԻՇԱՐ ԳԱԼԻԱՆՈՆ՝ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՄԲԻ ՀԵՏ

Մեր ժամանակների լավագույն ակորդեոնահարներից Ռիշար Գալիանոն առաջին անգամ հանդես կգա Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ:

Համերգը տեղի կունենա կանանց տոնին՝ մարտի 8-ին, իսկ մարտի 9-ին կլինի ջազային երեկո: Համերգները կանցկացվեն «Արամ Խաչատրյան» համերգասրահում: Մարտի 8-ի ծրագրում կհնչեն Պիացոլլայի եւ Գալիանոյի ստեղծագործությունները՝ Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ, իսկ մարտի 9-ին կայանալիք ջազային երաժշտության երեկոյին Գալիանոյի հետ բեմում կլինեն Սամվել Գասպարյանը (դաշնամուր), Դանիել Մելքոնյանը (շեփորահար), Նիկողայոս Վարդանյանը (կոնտրաբաս) եւ Արման Մնացականյանը (հարվածային գործիքներ):

Գալիանոն վիրտուոզ ակորդեոնահար, բանդոնեոնահար եւ կոմպոզիտոր է: Նա հանդես է գալիս երաժշտական բոլոր ժանրերում՝ դասականից մինչեւ ջազ: Մեր օրերի միակ ակորդեոնահարն է, որին ձայնագրել է հեղինակավոր «Deutsche Grammophon» ընկերությունը: Գալիանոն ձայնագրել է 70 ալբոմ՝ համագործակցելով լավագույն արտիստների ու երաժշտախմբերի հետ:

Նրա մասին ասում են. «Գալիանոն փոխեց ակորդեոնի պատմության ընթացքը»: Գալիանոն իր մասին ասում է. «Ես ցանկացել եմ ակորդեոնը, որին անարդարացիորեն անվանում են «աղքատների դաշնամուր», ըստ արժանվույն ներկայացնել աշխարհին, չնայած միշտ նվագել եմ «Steinway»-ի վրա»:

Ռիշար Գալիանոն իր փոքրիկ գյուղից դուրս եկավ ու այդ նպատակով մեկնեց Փարիզ: Գալիանոյին հավատացին ու նրա հետ համագործակցեցին մեր ժամանակների լավագույն երաժիշտները: Աստոր Պիացոլլայի հետ նա սկսեց սերտորեն աշխատել 80-ականների սկզբին: Նրանց համագործակցությունը վերածվեց մտերիմ ընկերության: 2010-2016 թվականներին հեղինակավոր «Deutsche Grammophon» ձայնագրման ընկերության կողմից հրատարակվեցին Գալիանոյի «Բախ», «Վիվալդի», «Նինո Ռոտա» եւ «Մոցարտ» ալբոմները: Ակորդեոնը մի շարք երկրներում համարվում է ազգային գործիք: Այն առկա է Ֆրանսիայի, Բրազիլիայի, Արգենտինայի, Կոլումբիայի, Չինաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Բալկանների ժողովրդական երաժշտության մեջ:

«Համերգները, որոնք ես տալիս եմ 50 տարի շարունակ աշխարհի հինգ մայրցամաքներում, պատմում են արտիստի կյանքի մասին, այն տղայի անցած ճանապարհի, որ ոգեշնչված է երաժշտության հանդեպ մեծ կրքով, եւ ես հրավիրում եմ ձեզ կիսել այդ կիրքն ինձ հետ համերգի ժամանակ»,-ասում է Ռիշար Գալիանոն:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅՏ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի հրաձգության ֆեդերացիայի հետ համատեղ հայտ է ներկայացրել հրաձգության Եվրոպայի 2026 թվականի մեծահասակների եւ երիտասարդների առաջնությունը Երեւանում հյուրընկալելու համար: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտնում են ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից՝ մանրամասնելով, որ Հայաստանի հայտը ներկայացրել են Հայաստանի հրաձգության ֆեդերացիայի նախագահ Արթուր Հովհաննիսյանը եւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը Հունգարիայի Դյոր քաղաքում անցկացված հրաձգության Եվրոպայի առաջնության շրջանակում՝ մարզաձեւի միջազգային ֆեդերացիայի գործկոմի արտահերթ նիստում: ԿԳՄՍ նախարարի տեղակալի խոսքով՝ բացի Հայաստանից, 2026 թվականի Եվրոպայի առաջնությունը հյուրընկալելու հայտ է ներկայացրել նաեւ Բուլղարիան: Երեւանի եւ Վառնայի նախնական հայտերի ներկայացումից հետո Հրաձգության միջազգային ֆեդերացիան որոշում է կայացրել երեք հոգանոց աշխատանքային հանձնաժողով ձեւավորել, որը կայցելի մրցավայրեր պայմաններին եւ ենթակառուցվածքներին ծանոթանալու նպատակով: ԵԱ-ի անցկացման վերաբերյալ վերջնական որոշումը կկայացվի 2024 թվականի մայիսին:

ՍԿՍԵԼ ԵՆ ՊԱՅՔԱՐԸ

Հայաստանը ներկայացնող շախմատիստները սկսել են պայքարը «Aeroflot Open 2024» շախմատի միջազգային մրցաշարում: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ անցկացված 2 խաղափուլից հետո 2 միավոր ունեն 10 շախմատիստներ, այդ թվում՝ գրոսմայստերներ Մանուէլ Պետրոսյանը եւ Հովիկ Հայրապետյանը: Երկրորդ խաղափուլում Հովիկ Հայրապետյանը հաղթել է 2609 վարկանիշ ունեցող ադրբեջանցի գրոսմայստեր Այդին Սուլեյմանլիին: Գրոսմայստերներ Հայկ Մարտիրոսյանը, Սամվել Տեր-Սահակյանը, Էմին Օհանյանը եւ ՖԻԴԵ-ի վարպետ Էրիկ Հակոբյանն ունեն 1.5 միավոր: Ավելի վաղ միջազգային վարպետ Արսեն Դավթյանն առաջին խաղափուլում հաղթել էր իրանցի գրոսմայստեր Ամին Տաբատաբային, ով 2696 կետ վարկանիշով չորրորդ վարկանիշ ունեցող մասնակիցն է: Երկրորդ խաղափուլում նա պարտվել է միջազգային վարպետ Մաքսիմ Ծառուկին եւ այժմ ունի 1 միավոր:

ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության՝ Պրեմիեր լիգայի 23-րդ տուրի շրջանակներում կայացավ «Արարատ»-ԲԿՄԱ հանդիպումը: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ հանդիպման մեկնարկին ազդարարվեց Վազգեն Սարգսյանի 65-ամյակին նվիրված ֆուտբոլի համաբանակային մրցաշարի բացման հանդիսավոր արարողությունը: Պրեմիեր լիգայի այս տուրի նախավերջին խաղում «Արարատ»-ը նվազագույն հաշվով հաղթեց ԲԿՄԱ-ին: Արարատ»-ի միակ եւ հաղթական գնդակը խփեց Ռանսոնը խաղի 56-րդ րոպեին: Այս խաղից հետո «Արարատ»-ը մրցաշարային աղյուսակում 6-րդն է, իսկ ԲԿՄԱ-ն՝7-րդը: 23-րդ տուրը կեզրափակվի «Փյունիկ»-«Վեստ Արմենիա» խաղով, որը կկայանա փետրվարի 4-ին:

●Մարտի 5-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա ««Ջարթոնք». Պարույր Սեւակ - 100» գրական-երաժշտական երեկոն: Տոմսերի արժեքը՝3000-10000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ովքեր ունեն նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք: Ո՞ւմ է տրվում առաջնահերթություն:

Սիրան Հակոբյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեն մինչև 1936 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած, ինչպես նաեւ մարտական գործողությունների հետեւանքով չօգտագործվող եւ հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող, Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված, ինչպես նաեւ այդ համայնքներից զորակոչված՝ 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված անձինք՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձինք հաշվառման նպատակով պետք է դիմեն իրենց փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն: Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու համար դիմումը ներկայացնում է ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձը անձամբ կամ օրինական ներկայացուցչի կամ լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչի միջոցով:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչպես է որոշվում բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունքի դատական կարգով դադարեցման դեպքում սեփականատիրոջ կողմից վճարվող փոխհատուցման չափը:

Ալիսա Հայրապետյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետեւյալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց եւ սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից եւ ոչ ավելի, քան 9 քառակուսի մետրը: Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար եւ տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելուց եւ այդ գույքն իրացնելուց հետո գրավատուն ու բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձինք տան (բնակարանի) սեփականատիրոջ պահանջով պարտավոր են ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ազատել զբաղեցրած բնակելի տարածությունը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 272-րդ հոդված):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Մեքսիկայում կինն արտասովոր տարբերակ է գտել որդու հարսնացուն կանխելու համար. նա վարձել է երեք երիտասարդի, որպեսզի նրանք հարսի զգեստի վրա կարմիր ներկ թափեն ու այդպիսով խափանեն հարսանիքը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ________________

Ազգանուն՝ ________________

Առաքման հասցե՝ ________________

Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ________________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	-9 - 12 + 4 + 9
	Կոտայքի լեռներ	-8 - 12 + 5 + 8
	Կոտայքի նախալեռներ	-5 - 8 + 8 + 10
	Գեղարքունիք	-8 - 13 +3 + 6
	Լոռի	-6 - 10 + 8 + 10
	Տավուշ	- 4 - 7 + 8 + 11
	Արագածոտնի լեռներ	-8 - 12 +3 + 6
	Արագածոտնի նախալեռներ	- 5 - 7 + 8 + 11

	Արարատ	- 4 - 7 +11 + 13
	Արմավիր	- 4 - 8 +10 + 13
	Վայոց ձորի լեռներ	- 3 - 7 +3 + 6
	Վայոց ձորի նախալեռներ	- 3 - 7 +10 + 12
	Սյունիքի հովիտներ	- 4 - 7 +11 + 14
	Սյունիքի նախալեռներ	- 9 - 13 + 7 + 10
	ԼՂՀ	- 9 - 10 + 7 + 9
	Երեւան	1 - 3 + 8 + 10

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.3.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*